ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՈՒԳՈՐՅԱՆ

«___» _____ 01 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000002

Ձեռնարկողը՝ ***«Մառա և դուստրեր» ՍՊԸ***
Ք. Երևան, Բուզանդի 1/3

Գործունեությունը՝ ***Երևանի թիվ 95 դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000002

<22> 01 2020թ.

Երևանի թիվ 95 դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«Մառա և դուստրեր» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	ք.Երևան, Նուբարաշեն վարչական շրջան

Երևանի թիվ 95 հիմնական դպրոցի կառուցման աշխատանքային նախագիծն իրականացվելու է «Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի» շրջանակներում՝ Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ: Ծրագրի իրականացնող մարմին է հանդիսանում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը /ՀՏԶՀ/:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Նուբարաշեն վարչական շրջան, Նուբարաշեն 13-րդ փողոց հասցեում գտնվող հ. 95 հիմնական դպրոցի տարածքում, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականով ամրագրված՝ 1.67392 հա հողամասի սահմաններում /վկայական N 14092017-01-0571/, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման: Դպրոցի կառուցապատման նպատակով օգտագործվելու է հողամասի 13973,7 քմ մակերեսով տարածքը, մնացածը վերադարձվում է համայնքին: Նախագծման համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի կողմից տրված № 01/18-07/2-39622-429 առ. 27.05.2019թ. նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք):

Կառուցապատվող տեղամասում ռելիեֆը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ-արևմուտք: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1128.0-1134.0 մետրի սահմաններում: Մինչև 14.8մ խորության տարածքում գրունտային ջրերը բացակայում են:

Դպրոցի տարածքում առկա՝ հիմնական մասնաշենքին զուգահեռ ծառուղին և ձախակողմյան հատվածի կանաչ գոտին պահպանվելու են: Շինարարական աշխատանքների ազդեցության ենթակա թվով 23 ծառեր /որոնցից 18-ը փոքր են/ նախատեսված են տեղափոխել՝ ծառերի կենսունակությամբ պայմանավորված:

Դպրոցի ընդհանուր՝ 13 973.7 քմ հողատարածքում կառուցապատման մակերեսը կազմում է 2663,1 քմ մակերես: Գործունեությունն իրականացվելու է երկու իրար հաջորդող փուլերով՝

մասնաշենքերի և օժանդակ կառույցների ապամոնտաժում և նոր շենքի կառուցում: Համաձայն նախագծի դպրոցը բաղկացած կլինի սեյսմիկ կոնստրուկտիվ կարերով միացված 4 մասնաշենքերից, որոնցից յուրաքանչյուրը կունենա համապատասխանաբար՝ 793.5, 1180.3, 284.5 և 376.7 քմ մակերեսներ: Դպրոցի համար նախագծված նոր կաթսայատունը կզբաղեցնի 28.1 քմ ընդհանուր մակերես:

Մասնաշենքերից երկուսում նախագծված է թվով 25 դասասենյակներ, աշխատասենյակներ և լաբորատոր սենյակներ, ինչպես նաև 1-ական ճաշասենյակ: Դպրոցի երրորդ մասնաշենքը կծառայի որպես մարզադահլիճ, որտեղ նախագծվել են 2 հանդերձարաններ՝ լողասենյակներով և սանհանգույցով, իսկ չորրորդ մասնաշենքը կծառայի որպես հանդիսության սրահ: Ուսումնական մասնաշենքերը բաղկացած կլինեն 3 վերգետնյա հարկերից: Երրորդ մասնաշենքը միահարկ կառույց է՝ 8,2մ ընդհանուր բարձրությամբ, իսկ չորրորդ մասնաշենքը միահարկ կառույց է՝ 6,0 մ ընդհանուր բարձրությամբ: Դպրոցի տարածքում նախատեսվում է 1 բացօթյա սպորտային գոտի՝ 1890 քմ մակերեսով:

Մասնաշենքերի տանիքը նախատեսվում է կառուցել լանջավոր՝ փայտյա ծպեղային համակարգով, որը կունենա նաև կազմակերպված արտաքին ջրահեռացում: Բոլոր մասնաշենքերի կոնստրուկտիվ լուծումներում կօգտագործվեն միաձույլ երկաթբետոնե սյուներ, հեծաններ, պատեր, մետաղական ֆերմա և սենդվիչ պանելներ:

Դպրոցում նախատեսված են ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր՝ բնական և մեխանիկական եղանակով: Նախագծվող դպրոցի տարածքում նախատեսված է արտաքին լուսավորության համակարգ:

Նախագծված դպրոցի ջրամատակարարումն իրականացվելու է 80 մմ տրամագծի ջրագծից՝ d=25 մմ միացումով: Ջրահեռացումն իրականացվելու է Նուբարաշենի 13 փողոցով անցնող 500 մմ տրամագծի կոյուղագծից՝ d=200 մմ միացումով: Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական և տեխնոլոգիական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվում են նախագծված ներտարածքային արտաքին ցանց և թափվում կոյուղատար: Արտաքին ցանցերը նախատեսվում է պոլիէթիլենային բարձր ճնշման և պողպատյա խողովակներից, որոնք խրամուղու մեջ կանցկացվեն 1.25մ խորության վրա՝ 0.2մ հաստությամբ ավազի պաշտպանիչ շերտով:

Դպրոցի ջեռուցումն իրականացվելու է ջրային երկու կաթսաներով /յուրաքանչյուրը՝ 300կվտ հզորությամբ/ բնական գազի առավելագույն՝ 56.6մ³/ժ ծախսով: Վառելիքի այրման ընթացքում առաջացած ծխագազերը կհեռացվեն 300մմ տրամագծով և 9մ բարձրությամբ ծխնելույզի միջոցով: Տաք ջրամատակարարման համար կօգտագործվի արևային ֆոտովոլտային կայանից ստացված էլեկտրաէներգիան: Նախագծով դպրոցի տանիքին նախատեսվում է 114,570 Վտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում:

Դպրոցի տարածքի ամբողջ համալիրում նախատեսվում է բարեկարգել 11 310 քմ մակերեսով տարածք /որից 4671 քմ-ը նախատեսված է կանաչապատման համար/: Բոլոր մասնաշենքերի պարագծով նախատեսված են սալվածքներ, իսկ տարածքի երթևեկելի մասերում համապատասխան թեքություններով իրականացվելու է ասֆալտբետոնե ծածկույթ՝ դպրոցի տարածքից մակերևույթային ջրերի հեռացումն ապահովելու նպատակով:

Նորաստեղծ կանաչապատ գոտիների համար նախագծվել է ոռոգման համակարգ: Ոռոգումն իրականացվելու է Նուբարաշենի այգու կից տարածքով անցնող Φ100մմ ոռոգման ցանցից՝ ռետինե ճկափողով փականներով կարճախողովակներից:

Դպրոցի շինարարության տևողությունը հաշվարկվել է 26 ամիս: Նախաշինարարական փուլում կիրականացվեն դպրոցի տարածքի ժամանակավոր մետաղական թիթեղներով ցանկապատում, շինարարական հրապարակի կազմակերպման աշխատանքներ, ինչպես նաև կոմունիկացիաների վերատեղադրման, տեղափոխման և գոյություն ունեցող կոմունիկացիաներին միացման աշխատանքներ: Շինարարական հրապարակը, ներառյալ՝

շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը, շարժական տնակը կազմակերպվելու է բացառապես դպրոցի վարչական տարածքի սահմաններում:

Գոյություն ունեցող դպրոցի շենքի քանդման աշխատանքները կիրականացվեն ապամոնտաժման եղանակով, ինչի արդյունքում հնարավոր կլինի խուսափել բնապահպանական ազդեցություններից /աղմուկ և փոշի և այլն/ և կկրճատվի շինարարական աղբի ծավալները: Ապամոնտաժման աշխատանքներում կօգտագործվեն ձեռքի կտրող գործիքներ և զոդման տեխնիկա, կբացառվի այլ խոշոր քանդող տեխնիկայի կիրառումը: Ապամոնտաժումից առաջացած և հետագայում օգտագործման համար պիտանի նյութերը՝ որպես երկրորդային շինարարական նյութեր, կտեղափոխվեն շին-կապալառուի պահեստ և կօգտագործվեն այլ շինարարական աշխատանքներում, իսկ գոյացած շինարարական աղբը /3265 մ^3 ծավալով/ կտեղափոխվի նախատեսված աղբավայր:

Շինարարության ընթացքում հողային աշխատանքները ներառում են հետևյալ ծավալները.

- տարածքի համահարթեցման համար գրունտի հանույթ՝ 3303 խմ, որից 471 խմ լիցք, հեռացվող գրունտ՝ 2832 խմ,
- դպրոցի հիմքերի համար խրամուղիների և փոսորակների փորում՝ 3 820 խ. մ, որից հետլիցք՝ 2 359 խմ,
- հենապատի, ցանկապատերի, կաթսայատան, արտաքին ինժեներական ցանցերի համար գրունտների մշակում, ասֆալտի քանդում 2060 խմ, որից ետլիցք՝ 1234 խմ,
- բարեկարգման համար բերվող սևահող՝ 935 խմ:

Հողային աշխատանքներից և ապամոնտաժման աշխատանքների քանդման արդյունքում առաջացող և հեռացման ենթակա մնացորդային գրունտը և շինաղբը սահմանված կարգով տեղափոխվելու են Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Շինաշխատանքների համար պահանջվող ջրաքանակը նախատեսվում է վերցնել տարածքում առկա ջրագծից: Ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Շինարարության փուլի համար հաշվարկվել է հողային աշխատանքներից առաջացող անօրգանական փոշու արտանետումները / 0.358գ/վրկ, կամ 0.91 տ/շին.ժամանակահատված/, որի քանակները նվազեցնելու նպատակով նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ՝ շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների տեղաշարժ՝ սահմանված չափաքանակով, պաստառների առկայությամբ և այլն:

Հեղուկ նյութերը, վառելիքի մնացորդային քանակները, քսայուղերը շինարարական հարթակ են տեղափոխվելու օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ անթափանց տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

Հայտում վերլուծվել են նաև շինարարության ընթացքում աղմուկի, թրթռումների, երթևեկության ծանրաբեռնվածության հնարավոր ազդեցությունները շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա, նախատեսվել են համապատասխան մեղմացնող միջոցառումներ: Նախատեսվել են նաև միջոցառումներ տարածքում առկա կանաչ գոտիների և բուսահողի պահպանմանը, աշխատանքի և աշխատողների առողջության անվտանգության ապահովմանն ուղղված՝ հնարավոր սոցիալական ազդեցությունները բացառելու նպատակով: Բոլոր բնապահպանական միջոցառումներն ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում (ԲԿՊ):

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Համաձայն նախագծի, կառուցապատումից հետո նախատեսվում է 4671 քմ մակերեսով տարածքում ստեղծել նոր կանաչապատ գոտի և բացուցիչ իրականացնել ծառատունկ /տնկվելու է 41 հատ հացենի, 40 հատ գնդաձև ակացիա, 23 հատ կաղնի և 44 հատ գնդաձև թույա/: Կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի 935 խմ բուսահող: Կանաչապատման աշխատանքներն /ներառյալ՝ գոյություն ունեցող ծառերի տեղափոխումը/, իրականացվելու են Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված՝ ''Տարածքի կանաչապատ գոտիների բարեկարգման նախագծի'' համաձայն: Ենթածրագրի շրջանակում իրականացվող կանաչապատման միջոցառումների գումարային արժեքը գնահատվել է 1.740754 ՀՀ դրամ, /ծառերի վերատնկումը, ծառատունկը, սիզամարգերի ստեղծումը, բուսահողի բերումը և փռումը/, որը ներառված է նախագծի ծավալաթերթերում:

Ծրագրի պատվիրատուի՝ ՀՏԶՀ-ի կողմից, կանոնավոր մոնիթորինգի միջոցով ստուգվելու է բնապահպանական միջոցառումների կատարման արդյունավետությունը, ներառյալ՝ տարածքում առկա ծառերի և թփերի աճման և կպչողականության մշտադիտարկման/վերահսկման իրականացումը: Հետշինարարական մոնիտորինգը սահմանվում է մեկ տարի, որի ընթացքում կպչողականություն չապահովող ծառերը կփոխարինվեն նորերով: Կանաչապատ տարածքի հետագա խնամքը կհանձնվի դպրոցի տնօրինությանը:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան համայնքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Պատճառաբանական մաս. Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները, կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք շինարար կապալառուի կողմից կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական մեղմացնող միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

- Քանդման և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մառա և դուստրեր» ՍՊԸ կողմից ներկայացված Երևանի թիվ 95 դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան